



ՄՈՒՐԲ ԶԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Խ ԿԵՂԵՅԻ

Անառապ Կիրակի
16 ՄԱՐՏ 2025

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 4,5,7,8
Անդրադարձներ եւ Խորհրդածութիւններ	Էջ 6
Ողորմութեան Կանչ Մը (Շար. 36)	Էջ 7

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (54.11-55.13)

Տէրը այսպէս կ'ըսէ.
 «Ո՛վ Երուսաղէմ, փոթորիկէն զարնուած անմխիթար տառապեալ, հաշտութիւն պիտի ընեմ հետդ, որպէսզի մխիթարուիս. ահա ես քու հիմերդ շափիւղայ քարերով պիտի դնեմ, պատկերդ՝ կարկեհան քարերով, աշտարակներդ՝ կարմիր յակինթներով պիտի կանգնեմ, դռներդ՝ բիւրեղէ, եւ շուրջդ պարիսպ պիտի քաշեմ ընտիր եւ թանկագին քարերով: Բոլոր որդիներդ Աստուծոյ ուսած պիտի ըլլան, զաւակներդ մնայուն խաղաղութիւն պիտի վայելեն, եւ դուն արդարութեան մէջ պիտի հաստատուիս: Ա՛լ բռնութեան վախը պիտի չունենաս, արհաւիրքը քեզի պիտի չմօտենայ: Քեզի եկողները պիտի ըլլան միայն անոնք՝ որոնք ինձմով դարձի կու գան. իրենց երկիրները ձգելով պիտի գան քու կողքիդ բնակին, քեզ իրենց ապաստանը դարձրնելով: Ահա ես ինքս քեզ հաստատեցի. դարբինը իր փքոցով կրակը կ'արծարծէ եւ կը շինէ գործիքներ՝ որոնք գործածութեամբ կը մաշին ու կը փճանան. սակայն ես քեզ հաստատեցի որ միշտ մնաս: Որեւէ զէնք պիտի չյաջողի քեզի վնասել, որեւէ լեզու որ կը փորձէ քեզ դատապարտել՝ պարտութեան պիտի մատնես, եւ քեզ ամբաստանողները իրենք պիտի դատապարտուին: Տիրոջ

ծառայողներուն ժառանգութիւնը ա՛յս է. ե՛ս է որ զանոնք կ'արդարացնեմ, - կ'ըսէ Տէրը: Դուք որ ծարաւի էք՝ ջուրին եկէք, եւ դուք որ դրամ չունիք՝ եկէք գինի ու կաթ առէք առանց դրամի, առանց գին վճարելու: Ինչո՞ւ ձեր վաստակը կու տաք այնպիսի բաներու որոնք չեն կշտացներ: Ինձի մտիկ ըրէք եւ բարիք պիտի վայելէք, բարիքներով պիտի կշտանաք: Ականջ տուէք խօսքերուս եւ պատուէրներուս հետեւեցէք: Եթէ մտիկ ընէք ինձի, բարիքներու մէջ պիտի ապրիք, ձեզի հետ յաւիտեանական ուխտ մը պիտի կնքեմ, եւ ձեզի պիտի տամ այն իսկական օրհնութիւնը զոր Դաւիթի խոստացայ: Ես գինք հեթանոսներուն վկայ եւ ազգերուն իշխան ու հրամանատար կարգեցի: Քեզ չգիտցող ազգեր քեզի պիտի դիմեն, քեզ չճանչցող ժողովուրդներ քեզի պիտի ապաւինին քու Տէր Աստուծոյդ՝ Իսրայէլի Սուրբին համար, որ քեզ փառաւորեց»:

Փնտռեցէք Տէրը, որքան ատեն որ կրնաք զինք գտնել. կանչեցէք զայն, որքան ատեն որ կրնաք զինք գտնել. կանչեցէք զայն, որքան ատեն որ մօտիկ է: Ամբարիշտը իր չար ճամբաներէն եւ անօրէնը իր չար խորհուրդներէն թող հրաժարի եւ Տիրոջ դառնայ, եւ Տէրը պիտի ողորմի անոր. թող մեր Աստուծոյն դառնայ, որ կը ներէ նոյնիսկ եթէ բազմապատիկ ըլլան ձեր մեղքերը: «Որովհետեւ, իմ խորհուրդներս ձեր խորհուրդներուն պէս չեն, իմ ճամբաներս ձեր ճամբաներուն չեն նմանիր, - կ'ըսէ Տէրը: Այլ, որքան երկիրքը երկրէն բարձր է՝ այնքան բարձր են իմ ճամբաներս ձեր ճամբաներէն, եւ իմ խորհուրդներս՝ ձեր խորհուրդներէն: Ինչպէս անձրեւն ու ձիւնը երկիրքէն կ'իջնեն

եւ երկիրնք չեն բարձրանար կրկին մինչեւ երկիրը չոռոգեն, զայն չարգասաւորեն ու չպղտորեն, եւ սերմանողին սերմ եւ ուտելիք հաց չտան, այնպէս ալ իմ բերնէս ելած խօսքը ապարդիւն ինծի պիտի չդառնայ, մինչեւ իմ կամքս կատարէ եւ նպատակներս յաջողցնէ: Այո, ուրախութեամբ դուրս պիտի գաք ձեր գերութենէն եւ խաղաղութեամբ պիտի առաջնորդուիք. լեռներն ու բլուրները պիտի խայտան եւ ցնծութեամբ ընդունին ձեզ, եւ դաշտի բոլոր ծառերը իրենց ճիւղերով ծափ պիտի զարնեն: Յրդենիին տեղ նոճի եւ դժնիկին փոխարէն մրտենի պիտի բուսնի. եւ ասիկա Տիրոջ անունին համար անջնջելի, յաւիտենական նշան մը պիտի ըլլայ»:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐԻՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ
(6.1-7.1)**

Արդ, որովհետեւ Աստուծոյ գործակիցներն ենք, կ'աղաչենք ձեզի, մի՛ վատնէք Աստուծոյ ձեռքը ստացած շնորհքը: Որովհետեւ Աստուծոյ կ'ըսէ.

«Երբ յարմար ժամանակը եկաւ՝ լսեցի քեզ, երբ փրկութեան օրը հասաւ՝ օգնեցի քեզի»: Ահա հիմա՛ է այդ յարմար ժամանակը. հիմա է փրկութեան օրը:

Ոեւէ բանով պատճառ մի՛ ըլլաք որ Աստուծոյ գործը խափանուի կամ վարկաբեկուի. այլ բոլոր պարագաներուն ալ դուք ձեզ ցոյց տուէք որպէս Աստուծոյ պաշտօնեաներ, մեծ համբերութեամբ յանձն առնելով նեղութիւնը, վիշտը, չարչարանքը, ծեծը, բանտը, խռովարարներու յարձակումները, յոգնութիւնը, անքնութիւնը, անօթութիւնը: Այս բոլորը տարէք մաքուր սիրտով, գիտակցօրէն, համբերատարութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութիւնը քարոզելով, Աստուծոյ գործութեամբ եւ արդարութեամբ զինուած՝ չարին դէմ յարձակելու եւ ինքզինք պաշտպանելու համար: Մի՛ այլայլիք ո՛չ փառքէն եւ ո՛չ անարգանքէն, ո՛չ գովասանքէն

եւ ո՛չ մեղադրանքէն: Մարդիկ մոլորած թող ըսեն մեզի. մենք գիտենք թէ ճշմարտութենէն չենք շեղած: Թող չուզեն մեզ ճանչնալ. մենք գիտենք թէ մեզ լա՛ւ կը ճանչնան: Թող մեռած սեպեն մեզ. մենք գիտենք թէ կենդանի ենք: Թող մեզ պատժապարտ համարեն. մենք գիտենք թէ մահուան դատապարտութենէն ազատած ենք: Թող մեր կեանքը տխուր կարծեն. մենք միշտ ուրախ ենք: Աղքատ թող սեպեն. մենք ուրիշներու կեանքերը կը ճոխացնենք: Այո՛, կը թուի թէ ոչի՛նչ ունինք, մինչ ամէն ինչ ունինք:

Ահա, սիրելի՛ Կորնթացիներ, ամէն ինչ բաց եւ անկեղծ սիրտով ըսի ձեզի: Դուք ինչո՞ւ կը դժուարանաք արտայայտուելու: Ո՛չ իմ պատճառովս հարկաւ, այլ պարզապէս՝ ձեր սէրը ինծի արտայայտելու կը քաշուիք: Բայց կ'ուզեմ որ ինծի պէս բանաք ձեր սիրտերը եւ ազատօրէն խօսիք դուք ալ. չէ՞ որ իմ գաւազներս էք դուք:

Բնա՛ւ, անհաւատներուն գործակից մի՛ ըլլաք: Ի՞նչ կապ կրնայ ունենալ արդարը անօրէնին հետ, կամ ի՞նչ նոյնութեան եզր կրնայ ըլլալ լոյսին եւ խաւարին միջեւ: Ի՞նչ համաձայնութիւն կրնայ ըլլալ Քրիստոսի եւ սատանային միջեւ, կամ ի՞նչ գործ ունի հաւատացեալը անհաւատին հետ: Ի՞նչ նմանութիւն կայ Աստուծոյ տաճարին եւ մեհեաններուն միջեւ:

Արդարեւ մե՛նք ենք կենդանի Աստուծոյ տաճարը, ինչպէս Աստուծոյ ինք ըսաւ.

«Անոնց մէջ պիտի բնակիմ եւ անոնց հետ պիտի ապրիմ: Ես իրենց Աստուծոյ պիտի ըլլամ եւ անոնք իմ ժողովուրդս»:

Ահա՛ թէ ինչո՞ւ Աստուծոյ կը հրահանգէ մեզի.

«Անջատ եւ հեռու կեցէք հեթանոսներէն. պիղծ բաներու մի՛ դպչիք, եւ ես ձեզ պիտի ընդունիմ: Ես ձեզի հայր պիտի ըլլամ եւ դուք իմ տղաքս ու աղջիկներս պիտի ըլլաք,՝ կ'ըսէ Ամենակալ Տէրը»:

Սիրելիներ՛ը, այս խոստումները մեզի՛ եղած են: Ուստի հեռու մնանք մարմնական եւ հոգեկան

ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(15.1-32)**

Մաքսաւորներ եւ մեղաւորներ Յիսուսի կու գային՝ զինք լսելու համար: Փարիսեցիներն ու օրէնքի ուսուցիչները սկսան տրտնջալ, ըսելով. «Ինչպէ՞ս կ'ըլլայ որ այս մարդը մեղաւորները կ'ընդունի եւ անոնց հետ կը ճաշէ»:

Յիսուս հետեւեալ առակաները պատմեց անոնց.-

«Ենթադրենք որ ձեզմէ մէկը հարիւր ոչխար ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր իննսունինը արօտավայրին մէջ եւ չ'երթա՞ր կորսուածին ետեւէն, մինչեւ որ գտնէ գայն: Եւ երբ գտնէ, ուրախութեամբ իր ուսերուն վրայ կը դնէ եւ տուն կը դառնայ, կը կանչէ իր բարեկամներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց. «Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ կորսուած ոչխարս գտայ»: Կ'ըսեմ ձեզի, երկիւղի մէջ նոյնպէս ուրախութիւն պիտի ըլլայ մէկ ապաշխարող մեղաւորի համար, քան իննսունինը արդարներու համար, որոնք ապաշխարութեան պէտք չունին»:

«Կամ ենթադրենք թէ կին մը տասը արծաթ դահեկան ունի: Երբ անոնցմէ մէկը կորսնցնէ, ճրագը չի՞ վառեր եւ տունը ուշադրութեամբ չ'ա՛լեր, մինչեւ որ դահեկանը գտնէ: Եւ երբ գտնէ, կը կանչէ իր բարեկամուհիներն ու դրացիները եւ կ'ըսէ անոնց. «Ուրախացէ՛ք ինծի հետ, որովհետեւ կորսնցուցած դահեկանս գտայ»: Կ'ըսեմ ձեզի, Աստուծոյ հրեշտակները նոյն ձեւով պիտի ուրախանան մեղաւորի մը համար, որ կ'ապաշխարէ»:

Ապա շարունակեց.-

«Մարդ մը երկու գաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ. «Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի ինկող բաժինը հիմա տուր ինծի»: Եւ հայրը իր գաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը:

Քանի մը օր ետք կրտսեր գաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

«Պատահեցաւ որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անիկա իր ագարակը ղրկեց զինք՝ խոզեր արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիւրներով իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. «Հօրս տան մէջ քանի՞ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն.- Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. զիս նկատէ քու գործաւորներէդ մէկը»: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց: Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գթաց. վազելով դիմաւորեց գայն, վզին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին Հօրը ըսաւ. «Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու»: Հայրը իր ծառաներուն հրամայեց. «Անմիջապէս բերէք լաւա-գոյն պատմուճանը եւ հագցուցէք իրեն. մատանի անցուցէք իր մատին եւ կօշիկ տուէք իրեն: Բերէք պարարտ հորթը, մորթեցէք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս գաւակս մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Եւ սկսան խրախճանքի:



ԶԱՏՈՒԱՅ ԻՐԱԳԻՆ

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՒՆ ԱՌԹԷ,
ՎԱՏԱՀ ԵՆՔ,
ՈՐ ԱԵՐ ԲԱՐԵՊԱԵՏ ԺՈՂՈՎՈՐԴՈՒ ՊԻՏԻ
ՁՊՈՌԱՅ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԻԲՂԱԳԻՆՆԵՐ ԻՐ ԱՐՏԱՔՈՒԽ
ԱՌԻՐԱՏՈՒԹՅՈՒՆԸ:

ՀՐԻԱՆՊԵՐՈՒՄ ԱՅԵԼՈՒԹՅՈՒՆ

Բարեհաճեցէք հեռաձայնել
Արժ. Տ. Գառնիկ
Աւ. Քինյ. Գոյունեանի.
514 909 5203 թիւին:

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհնէք փափաքող ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Աւ. Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով
514 909 5203 թիւին:

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ

Ձեր արձանագրութիւնները
առկօրօք կատարե՛ժէք կառուիելով
ԵԿԵՂԵՅՈՂ ԳՐԱՏԵՆԵԱԿ:

ԱՅԵԼԵՅԷ՛Ք

ԵԿԵՂԵՅՈՂՍ
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷԶՈՒ

ԵՒ

ՁԵՐ ՀԱԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ յԱՅՏԵՅԷ
(like).

[www.facebook.com/
SourpHagopChurchMontreal](http://www.facebook.com/SourpHagopChurchMontreal)

ԱՅԵԼԵՅԷ՛Ք ԱՎ

ԵՒ

Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋԱՆՈՐԿԱՆԱՍ
ՄԱՐ ԵԿԵՂԵՅՈՂ ԿԱՅԷԶՈ՝
www.sourphagop.net

ԹԵՐԹԻԿԻ ԱՆՆՈՐԴ ԹԻԲԵՐ

ԿՐՆԱՔ ԳՏՆԵԼ

www.sourphagop.net

ԿԱՅԷԶԻՆ ԿՐԱՅ

ՍՈՂԱ ԹԵՐԹԻԿՈՒ Ե-ԱՆՈՒՆՈՎ

ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ

ՈՒՂԱՐԿԵՅԷ

eglise58@sourphagop.com

Ս. Յակոբ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցւոյ մէջ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄ
Չարեհ Արք. Ավետարեանի
«ՅԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ»
Գրքոյկին

Շաբաթ, 5 Ապրիլ 2025,
երեկոյեան ժամը 6.00

Յետ ներկայացման՝
իւրաքանչիւր ներկայի
գրքոյկէն օրինակ մը նուէր պիտի տրուի
Նուիրատուն՝
պրն. Յակոբ Իսիէնճեան

Կը ներկայացնեն
Ս. Յակոբ Կիրակնօրեայ դպրոցի
ուսուցիչներ՝
Յարութ Չուլճեան
եւ Գրիգոր Պէքէրեան

ՅԱՍԿՆԱՆՔ
ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ



ՍՈՒՐՔ ՊԱՏԱՐԱԳԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ,
ԿԱՌՈՅՑԸ, ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆԸ

ԶԱՐԵՆ ԱՐՔ. ԱԶՆԱԴՈՐԵԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍ
2019

**RÉSERVEZ LA DATE
LE 20 AVRIL 2025 À 14H00**

DÎNER DE PÂQUES

Անդրադարձներ Եւ Խորհրդածույթիւններ

Ձեկուցում Թիւ 8.- Ս. Պատարագի մասին դասախօսութիւններու շարքը, որուն մասին գեկուցեցի Կիրակնօրեայ Թերթիկի 22 Դեկտեմբեր 2024-ի, 12 Յունուար 2025-ի, 19 Յունուար 2025-ի, 26 Յունուար 2025-ի, 9, 16, 23 Փետրուար, եւ 9 Մարտ 2025-ի համարներուն մէջ, աւարտեցի ամփոփելով Ալեքսանդր Շմեմանի անգլերէն թարգմանութեամբ «Գոհաբանութեան կամ Երկնքի Արքայութեան Խորհուրդը» (The Eucharist/Sacrament of the Kingdom) գիրքը: Հեղինակը զայն գրած է ռուսերէնով: Ս. Պատարագի մասին է: Գիրքին հիմնական միտքերը պարզաբանեցի: Նախաբանէն կը քաղեմ հետեւեալը. «Աւելի քան երեսուն տարիներ ծառայած եմ Եկեղեցւոյ որպէս քահանայ եւ աստուածաբան, որպէս հովիւ եւ ուսուցիչ: Այդ երեսուն տարիներուն, երբեք չեմ դադրած զգալ, թէ կոչուած եմ մտածելու Գոհաբանութեան Խորհուրդին (հասկնալ՝ Ս. Պատարագին _ ԳՔ), եւ Եկեղեցւոյ կեանքին մէջ անոր տեղին վրայ: Այս առնչութեամբ միտքեր եւ հարցումներ, որոնք սկսած են իմ վաղ պատանութեան տարիներուն, կեանքս ուրախութեամբ լեցուցած են, բայց, ավստս՝ ո՛չ անխառն ուրախութեամբ: Քանի որքան ինձի համար աւելի իրաւ դարձած է այս Գոհաբանութեան Խորհուրդին կամ Քրիստոսի յաղթանակի ու փառքի Խորհուրդին փորձառութիւնը՝ այնքան աւելի խստացած է իմ մէջ զգացումը, թէ Եկեղեցիէն ներս անոր տազնապ մը կայ: Եկեղեցւոյ աւանդութեան մէջ, ոչինչ փոխուած է: Ինչ որ փոխուած է Գոհաբանութեան Խորհուրդին ըմբռնումն է, անոր իսկութեան ըմբռնումը: Էապէս, տազնապը կը կայանայ անկապակցութեան ու անյարակցութեան մէջ անով կատարուածին, եւ անոր ըմբռնման, իմացման ու կեանքի վերածման միջեւ: Որոշ չափով մը, այս տազնապը միշտ ալ գոյութիւն ունեցած է Եկեղեցւոյ մէջ: Եկեղեցւոյ կեանքը, կամ աւելի ճիշդ՝ Եկեղեցւոյ ժողովուրդին կեանքը, երբեք ալ կատարեալ եւ իտեպական չէ եղած: Ժամանակի ընթացքին, սակայն, այս տազնապը քրոնիկ դարձած է: Հոգեհերձութիւնը, որ Եկեղեցւոյ կեանքը կը թունաւորէ եւ կը ստորագնահատէ անոր հիմքերն իսկ, սկսած է տեսնուիլ իբրեւ բնականոն երեւոյթ :

Միեւնոյն ատեն, կարելի է ըսել, առանց չափազանցութեան, թէ կ'ապրինք սոսկալի եւ հոգեւորապէս վտանգաւոր դարաշրջանի մը մէջ: Սոսկալի է ոչ թէ միայն ատելութեան, պառակտուածութեան եւ արիւնահեղութեան պատճառով, այլ մանաւանդ սոսկալի է՝ ընդդէմ Աստուծոյ եւ Անոր Արքայութեան դէմ աշտարակուող ըմբոստութեան: Ոչ թէ Աստուած, այլ մարդն է դարձած արժեկշիռը ամէն ինչի: Ոչ թէ հաւատքը, այլ գաղափարաբանութիւնը եւ գնորապաշտական (utopian) խուսափողականութիւնն են պայմանաւորողը աշխարհի հոգեւոր կացութեան: Որոշ չափով մը, արեւմտեան քրիստոնէութիւնը ընդունած է այս տեսանկիւնը (...): Գուցէ շատեր պիտի զարմանան, թէ ի պատասխան այս տազնապին, կ'առաջարկեմ մեր ուշադրութիւնը սեւեռել ոչ թէ ասոր այլազան երեսներուն, այլ Գոհաբանութեան Խորհուրդին, նաեւ Եկեղեցւոյ՝ որուն ճշմարիտ կեանքը կը յորդի այն Խորհուրդէն: Այո, իսկապէս կը հաւատամ, թէ ճիշդ այստեղ, Եկեղեցւոյ այս Սրբութիւն Սրբոցին մէջ, դէպի Տիրոջ Արքայութեան Սեղան բարձրացումին մէջ է աղբիւրը վերանորոգումին (...): Նաեւ կը հաւատամ, թէ Աստուծոյ ողորմութիւնը եւ բոլոր դարերու Ուղղափառ հաւատքը պահած եւ պահպանած է այս տեսիլքը, Եկեղեցւոյ այս գիտակցութիւնը, այս գիտութիւնը, թէ «ուր որ Եկեղեցին է, այնտեղ Ս. Հոգին է եւ կատարեալ Շնորհը» (Երանոս Լիոնցի, Ընդդէմ Հերետիկոսներուն, 3.24.1): Բայց ճիշդ այս պատճառով, մենք Ուղղափառ հաւատացեալներս պէտք է գտնենք ներքին զօրութիւնը սուգուելու Եկեղեցւոյ Գոհաբանութեանական վերանորոգումին մէջ: Ոչ թէ բարեկարգութիւն, ստիպողական պատշաճեցումներ եւ այժմեականացում է այնքան պէտք, որքան վերադարձ այն տեսիլքին ու փորձառութեան՝ որ սկիզբէն Եկեղեցւոյ ճշմարիտ կեանքը հիմնաւորած է: Ասիկա յիշեցնելու համար է սոյն գիրքը»:

Գիրքին էջերուն մէջ իր կարգ մը միտքերուն տարակարծութեամբս հանդերձ՝ Շմեման կը մնայ նոր հորիզոն բացող մը:

ԳՔ
(Ճարտնակելի 9)



ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ ԱՊՈԹՔԱՆԵՐ ԾԷԱԹԱԻՆ

ՀԵՊԻՆԱԿ՝ ՀԷՆՐԻ ՆՈՒԸՆ

ԹԱՐԳԱՆԱՆՈՒԹԻՒՆ՝ ԿԱՐՕ ՄՐԿ. ՆՈՒՆՈՒՏԵԱՆԻ

ԱՉԱՏ ՄԷՐ

Քաղցր Տէր, անգամ մը ըսիր. «Ձիս որկող
Հօրս կամքն է, որ չկորսնցնեմ ո՛չ իսկ մէկը
բոլոր անոնցմէ՛ որ ինձի տուաւ...» (Յհ 6.39):
Այսօր, այս բառերը միախառնութեան աղբիւր
են: Ասոնք ցոյց կու տան թէ, ամէն ինչ կ'ընես՝

զիս սիրոյդ մէջ պահելու համար: Ասոնք
կ'ապացուցեն, թէ արդարեւ այս աշխարհ եկար՝
զիս փրկելու համար, զիս ազատելու համար չարի
ու մեղքի կապանքներէն, եւ զիս՝ Հօրդ տունը
առաջնորդելու: Ասոնք ցոյց կու տան այն իրա-
կանութիւնը թէ կը կամենաս պայքարիլ զօրաւոր
ոյժերուն դէմ, որոնք զիս քեզմէ կը հեռացնեն:
Տէր, կ'ուզես զիս պահել, ինձի փարիլ, ինձի
համար մարտնչիլ, զիս պաշտպանել, ինձի օգնել,
նեցուկ կանգնիլ, զիս հանգստացնել, եւ զիս
Հօրդ ներկայացնել: Իսկապէս աստուածային
յանձնառութիւնդ է զիս պահել:

Այնուհանդերձ՝ ազատ եմ: Կրնամ ինքզինքս
քեզմէ նոյնիսկ անջատել, եւ այդ ազատութիւնը
ձեռքէս երբեք պիտի չառնես: Օ՛, սիրոյ ի՛նչ հրաշք,
աստուածային շնորհի ի՛նչ խորհուրդ:

Կը խնդրեմ, Տէր, տուր որ ազատօրէն ընտրեմ
սէրդ, որպէսզի քեզի համար կորսուած չըլլամ:
Ամէն:

(Շար. 36)

**ՄԻՋԻՆՔԻ
ԸՆԹՐԻՔ**

Չորեքշաբթի. 26 Մարտ 2025
Երեկոյեան ժամը 8.00
Մոնթրէալի Հայ Կեդրոն
Մուտքի սակ՝ 45\$
5-12 տարիքի փոքրերու՝ 30\$

Տեղեր ապահովելու համար հաճեցէք
հեռաձայնել կամ գրել՝
Լէօն Արսպեանին՝ 514 713-5366

*Համեղի
Անակուկազներ*

*Համեղի
Անակուկազներ*

ՄԵԾ ՊԱՅՈՑ ԼՍԱՐԱՆ ՑԵՏ ՀՍԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՒՆՆԵՐՈՒՆ

Սկիզբ ժամերգութիւններուն՝ երեկոյեան ժամը 7.00

3

Չորեքշաբթի, 19 Մարտին,
յետ Հսկումի ժամերգութեան
Հաւատքի դաստիարակութիւնը ըստ
Հայ Եկեղեցւոյ Հաւատամքին
կը խորհրդածէ
Բրշ. Թորոս սրկ. Պապիկեան

5

Չորեքշաբթի, 2 Ապրիլ,
յետ Հսկումի ժամերգութեան
Ս. Հոգին «որ խօսեցաւ յօրէնս
եւ ի մարգարես եւ յաւետարանս...»
եւ աղօթքը կը խորհրդածէ
Բրշ. Կարօ սրկ. Նոխուտեան

4

Միջիւնը, Չորեքշաբթի, 26 Մարտին,
յետ Հսկումի ժամերգութեան
Բոլոր հաւատացեալներուն բաշխում
Չարեհ Արք. Ազնաւորեանի՝ «Մեկնութիւն
Հայ Եկեղեցւոյ Հաւատամքի» գիրքին Նուէր՝
տ. եւ տիկ. Կարօ եւ Սայրի Շահինեան

6

Չորեքշաբթի, 9 Ապրիլ,
յետ Հսկումի ժամերգութեան
«Հաւատամք...ի մի Սկրտութիւն»ը
եւ մանուկներու Սկրտութեան մասին
կը խորհրդածէ հովիւը՝
Արժ. Տ. Գառնիկ Ա. Զիւլ. Գոյունեան

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեծ Պատեց Յինգշաբթի Օրերուն

(20, 27 Մարտ, եւ 3, 10 Ապրիլ)

Սկիզբ ժամերգութիւններուն՝

ժամը 11.00-ին

Ապա

Խորհրդածութիւններ

Նիւթ՝

«Տիրոջմէ Յիշուիլ, Յիշել Տերը»